

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՈՒԵՐԻ, ՄԻԱՑԵ՞Ք.

---

ՀՐԵՍԵՐԸՆԻԹՅՈՒՆ

ՀՅՈՒՅ ԱՐԴԵՐԵՑՅԱԽԹՅՈՒՆ ՓԱԳԱՎՐԴՅՈՒՆ ԿՈՄՄԱՆՆԱՅ

ԳԻՐՔ № 7

ԳՅՈՒՂԻՆՈՐՅՈՒՐՈՒՆԵՐԻ  
ԴԱՏԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Որենքի մատչելի պարզաբանություն)

---

ՅԵՐԵՎԱՆ

1927

دیگر  
نیافرید

لطفاً  
لطفاً

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՒԹԻ

ԺՀ

39322

ՀՐԱՅԵՐԱԿՈՒԹՅՈՒՆ


ՀՅԴ ԱՐԴՅՈՎԵՏՈՒԹՅՈՒՆ ՓՈՂՈՎՐԴՅԱԿԱՆ ԿՈՄԻՏԱՑԻԱՅԻ

352 (-22)

ԳԻՐՖ № 7

ԳՅՈՒՂԻՆՈՐՅՈՒԹՅՈՒՆԵՐԻ  
ԴԱՏԱԿԱՆ ՍԵԿՅՈՒԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Որենքի մատչելի պարզաբանվածություն)



ՅԵՐԵՎԱՆ

1927

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ Տպարան

ՊԱՏՎԵՐ 573

ԳՐԱՌԵՄ. 454 Բ. ՏԻՐԱԺ 1600.

## **Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

ՀԱԽՀ 5-րդ գումարման կենտրոնական գործադիր կոմիտեյի 2-րդ նստաշրջանի

**ԿՅՈՒՂԵՍՏՐՀԱԽԹՆԵՐԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԵՏԵԿՏԻ ԱՆԳԱՄ-ՆԵՐ ՀԻՄՆԵԼՈՒ ՄԸՆԴԻ**

Գյուղական վայրերում ծագող քաղաքացիական և քրեական գործերի լուծումն արագացնելու, ժողոատարանների քաղաքացիական և քրեական անկարեռ գործերի թիվը կրծատելու նպատակով և ի բացառություն Դատարանակազմության կանոնագրքի 1-ին մասի 1-ին գլխի 2-րդ հոդվածի (ՀԱԽՀ Որ. ԺՈՂ. 1924 թ. № 4, հոդ. 23), Քաղաքացիական Դատավարության Որենսգրքի 3-րդ գլխի 21-րդ հոդվածի (Որ. ԺՈՂ. 1924 թ., № 2, հոդ. 11), Քրեական Դատավարության Որենսգրքի 1-ին մասի 2-րդ գլխի 25-րդ հոդվածի (Որ. ԺՈՂ. 1924 թ., № 5, հոդ. 24), այլ և ի լրացումն և ի փոփոխումն «Գյուղական Խորհուրդների» և «Խորհուրդների գավառակային համագումարների և գավառակային գործկոմների կանոնագրության» (Որ. ԺՈՂ. 1925 թ., № 9,

Հոդվածներ 57 և 58) Կենտրոնական Գործադիր  
Կոմիտեյի 2-րդ նստաշրջանը ՎՈՐՈՇՈՒՄ է.

1. Գյուղական խորհուրդներին առընթեր  
Հիմնել դատական սեկցիաներ նախագահի և  
յերկու անդամի, ինչպես նաև 2-5 փոխանդամի  
կազմով, վորոնց ընտրում է գյուղխորհուրդն  
իր կազմից :

Ծանոթություն .— Գյուղխորհուրդի նախագահը  
չի կարող մտնել դատական սեկցիայի  
կազմի մեջ :

2. Գյուղխորհուրդների դատական սեկ-  
ցիաների վրա պարտականություն դնել քննե-  
լու այն քաղաքացիական դատապահանջները,  
վորոնց գինը 15 ոռւբլուց ավելի չե, ինչպես  
նաև ծեծի (Քր. Որ. 1 մաս. Հոդ. 172) և խոս-  
քով, գրավոր ու գործողությամբ (Քր. Որ.  
185 Հոդ.) վիրավորանք հասցնելու վերաբեր-  
յալ քրեական գործերը :

Ծանոթություն .— Այս հոդվածի ներգործու-  
թյունը չի տարածվում այն վեճերի  
վրա, վորոնք ծագում են բատրակների  
և վարձողների միջև գյուղացիական  
տնտեսության մեջ ոժանդակ վարձու-  
աշխատանք կիրարկելու հողի վրա.  
այդ վեճերը լուծվում են գյուղխոր-  
հուրդների հաշտարար հանձնաժողով-  
ների կամ ժողովրդական դատարան-  
ների կողմից :

Այս հոդվածի ներգործության յենթակա չեն աշխատավարձի, նույնպես և ալիմենտների (սննդադրամ) վերաբերյալ գործերը, վորոնք լուծվում են ժողովրդական դատարանի կողմից:

3. Դատական սեկցիաներին յենթակա քրեական գործերի վերաբերմամբ սոցիալական պաշտպանության միջոցներ համարել՝ խոսքով, գրավոր կամ գործողությամբ վիրավորանք հասցնելու դեպքում հարկադիր աշխատանքներ մինչև մի շաբաթ ժամանակով կամ տուգանք մինչև 15 ուռելի, ծեծելու դեպքում՝ հարկադիր աշխատանքներ մինչև յերկու շաբաթ ժամանակով կամ տուգանք մինչև 25 ուռելի:

4. Իրենց գործունեյության ընթացքում դատական սեկցիաները ղեկավարվում են Արդժողկոմատի կողմից հրատարակվող հրահանգներով:

5. Դատական սեկցիայի վորոշումների դեմք գործուները կարող են քաղաքացիական և քրեական գործերի վերաբերմամբ դանդատալ համապատասխան դավառակային գործկոմի նախագահության հսկողության կարգով՝ վորոշման պահից յոթ որվա ընթացքում:

6. Դատական սեկցիաների վորոշումներն անմիջապես ի կատար են ածում գյուղիսուրդները:

Դանոթություն. — Դատական սեկցիայի վորոշման դեմ գանգառ տրվելու դեպքում դատական սեկցիան կարող է դանգատավորի միջնորդությամբ կասեցնել իր վորոշման կատարումը:

7. Գավառակային գործկոմի նախագահության վորոշումները վերջնական են և բողոքարկման յենթակա չեն:

8. Գյուղխորհուրդների գավառական սեկցիաներն ողտվում են համապատասխան գյուղխորհրդի տեխնիքական ապարատից:

9. Դատական սեկցիաների նախագահն ու անդամները սեկցիայում կատարած աշխատանքների համար վարձատրություն չեն ստանում:

10. Հանձնարարել Արդֆողկոմատին այս վորոշման հետևանքով համապատասխան փոփոխություններ մտցնել գործող որենսդրության մեջ:

11. Այս վորոշումը գործադրության դնել 1927 թ. նոյեմբեր 1-ից:

**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ**

**ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. Կարինյան**

**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. Դաշտոյան**

**Յերևան.**

ԳՅՈՒՂԻՄԱՐՀՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԳՅՈՒՂԻՄՆ ՍԵԿՑԻՈՆՆԵՐԻ ՄՅՈՒՆ  
(ՈՐԵՆՔԻ ՄՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՐԳԱԲԵՐՆՈՒԹՅՈՒՆ)

I.

ՀԱԽՀ ԽՈՐԴՐԴային իշխանության որով 7  
տարվա ընթացքում մեր գյուղխորհուրդները  
մեծ փորձառություն են ձեռք բերել թե վար-  
չական և թե կուլտուր-տնտեսական աշխա-  
տանքների ասպարիզում։ Գյուղխորհուրդները  
մոտեցել են գյուղական բնակչությանը, դար-  
ձել են մասսայական մարմիններ և նրանց հե-  
ղինակությունը բարձրացել է աշխատավոր  
գյուղացիության աչքում։ Այս պայմաննե-  
րում, բնականաբար, առաջ պետք է գար այն  
կարևոր հարցը, թե անհրաժեշտ է վորոշ չա-  
փով ընդարձակել գյուղխորհուրդների իրա-  
վունքները, այսինքն՝ հնարավորություն տալ  
նրանց ինքնուրույն կերպով լուծելու իրենց  
վայրի վարչական և կուլտուրական-տնտեսա-  
կան կյանքին վերաբերող մի շաբք հարցեր։

Ներկայումս գյուղխորհուրդների իրա-  
վունքներն ընդարձակված են վարչական գոր-  
ծերի ասպարիզում։ այսպես՝ բացի այն խըն-  
դիրներից, վորոնք դրված են գյուղխորհուրդ-  
ների վրա համաձայն նրանց կանոնադրության,

նրանք իրավունք ունեն վավերացնելու փոխանորդագրեր, ստորագրություններ, հաստատելու առ ու ծախսի, փոխանակության և նըմիբման պայմանագրեր, յեթե գումարը 300 ռուբլուց ավելի չե և այլն։ Նրանց վերապահված են նույնպես վարչական կարգով պատժելայն անձանց, վորոնք խախտում են գյուղական վայրերի վերաբերյալ համապատասխան մարմինների հրատարակած պարտադիր վորոշումները։ Բացի դրանից գյուղխորհուրդների վրա պարտականություն են դրվում այսուհետեւ տոմարագրելու քաղաքացիական կացության բոլոր ակտերը, այն ե՝ ծնունդը, մահը, ամուսնությունը, ամուսնալուծությունը և վորդեգրումը։ Գյուղխորհուրդները նույնպես հանդիսանում են խնամակալության և հոգաբարձության մարմիններ։

Գյուղխորհուրդների իրավունքներն ընդլայնելու տեսակետից շատ կարևոր նշանակություն ունի ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի 2-րդ նստավրջանի 1927 թ. սեպտեմբերի 18-ի վորոշումը, վորի համաձայն գյուղխորհուրդներին կից հիմնվում են գատական սեկցիաներ։ Արդժողկոմաւը այդ առթիվ 27 թ. հոկտեմբերի 1-ին արդեն հրատարակել է հրահանգ և ուղարկել է բոլոր գյուղխորհուրդներին և գավառակային գործկոմներին։ Մենք այս գրքույկում մանրամասն կերպով կը

խռովնք այդ դատական սեկցիաների մասին,  
նկատի ունենալով այն սկզբունքները, վորոնք  
նախատեսված են Կենտգործկոմի 1927 թ. սեպ-  
տեմբերի 18-ի վորոշումով և Արդժողկոմատի  
հրահանգով:

## II

### Ա. ԴԱՏԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒ- ԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Համաձայն ՀՍԽՀ 5-րդ գումարման Կենտ-  
րոնական Գործադիր Կոմիտեյի 2-րդ նստաշրը-  
ջանի վերոհիշյալ վորոշման գյուղխորհուրդ-  
ների դատական սեկցիաները քննում են, ինչ-  
պես քաղաքացիական, նույնպես և քրեական  
գործերը:

Քաղաքացիական գործերում պահանջների  
գումարը 15 ոռւր. ավելի չպետք է լինի: Այդ  
պահանջները քննում են այն գյուղխորհուրդի դա-  
տական սեկցիան, վորի վայրում ապրում ե  
պատասխանողը: Որինակ, յեթե մեկը վերցըել  
է մի ուրիշի արորը (չութը) և բոլորովին փչա-  
ցըել ե կամ չի ուզում վերադարձնել, նրա դեմ  
քաղաքացիական գործ կարելի յե սկսել դա-  
տական սեկցիայում միայն այն դեպքում, յերբ  
արորի գինը 15 ոռւրլուց ավելի չե, իսկ յեթե  
արորի տերը իր արորը գնահատում է 20 ոռւր.,  
այդ դեպքում նա պիտի դիմի ժողովարանին:

Պահանջներ կարելի յե ներկայացնել դա-  
տական սեկցիային և այլ դեպքերում, յերբ,

որինակ, մեկը մյուսից ցորեն ե վերցրել, բայց  
չի վերադարձնում, փող ե պարտք առել և ժա-  
մանակը լրանալուց հետո չի տալիս պարտքը  
և այլն, յեթե այդ բոլոր գեղքերում պահանջի  
գումարը 15 ոուր. ավելի չե:

Այստեղ հարկավոր ե հիշել այն հանգա-  
մանքը, վոր դատական սեկցիան չի կարող  
քննել այն վեճերը, վորոնք ծագում են բատ-  
րակների և վարձողների միջև, յեթե վերջին-  
ները բատրակներին վարձում են իրենց տրն-  
տեսության մեջ աշխատելու համար։ Որինակ,  
յեթե մեկը ծառայել է մի ուրիշի տանը կամ  
նրա արհեստանոցում կամ աշխատել է նրա  
արտում, այդում, բոստանում և այլն և իր աշ-  
խատանքի վարձը (որուկան կամ ամսական-  
միևնույն ե) չի ստացել, այդպիսի գեղքերում  
վեճերը լուծում են գյուղխորհուդների հաշ-  
տարար հանձնաժողովները կամ ժողովաս-  
րանները։ Իսկ յեթե բատրակը վեճ ունի վոչ-  
թե իրեն վարձողի, այլ մի ուրիշ գյուղացու  
հետ, կամ վորեւ գյուղացի պահանջ ու-  
նի ուրիշի անտեսության մեջ աշխատող բատ-  
րակից, այդ գեղքերում պահանջ անողը գի-  
մում է դատական սեկցիային, իհարկե յեթե  
պահանջի գումարը 15 ոուրլուց ավելի չե։  
Դատական սեկցիան չի կարող քննել նաև ալ-  
բուստի միջոցին վերաբերյալ գործերը։ որին.  
յեթե կինը իր մարդուց հեռանալուց հետո

ցանկանում ե նրանից ստանալ ապրուստի միջոց, թէ իր և թէ յերեխայի համար, —այդ բոլոր գեղքերում պահանջը պետք ե ներկայացվի ժողովատարանին:

Նույնպես դատական սեկցիային յենթակա չեն և այն պահանջները, վորոնք ուղղված են պետական հիմնարկությունների ու ձեռնարկությունների դեմ: Այդպիսի պահանջները քննում ե ժողովատարանը:

Ինչ վերաբերում ե քրեական գործերին, ապա պետք ե չեշտել, վոր ծեծի, ինչպես նաև խոսքով, գրավոր կամ գործողությամբ վիրավորանք հասցնելու վերաբերյալ գործեր քննում ե այն գյուղխորհրդի դատական սեկցիան, վորի վայրում տեղի յե ունեցել դեպքը—ծեծը կամ վիրավորանքը: Որինակ յեթե Նորագավիթցի Մարտիրոսյանը Փարաքար գյուղում կովել ե Վարժագիարցի Գևորգյանի հետ, ապա նրանց գործը քննում ե վոչ թէ Նորագավիթի կամ Վարժագիարի դատական սեկցիան, այլ Փարաքարի դատական սեկցիան:

Ծեծ ասելով պետք ե հասկանալ վորեե մեկին առանց մարմնական վնասվածք պատճառելու հարցածներ հասցնելը: Հարվածը միայն մարմնական ցավ ե պատճառում ե կարելի յե հասցնել ձեռքով, վոտքով, փայտով, ձորակով և այլն: Միայն ոյս դեպքերում

ծեծի վերաբերյալ դործերը քննում ե դատական սեկցիան:

Իսկ յեթե ծեծը մարմնական վնասվածք ե պատճառում, վորի հետևանքն ե լինում տուժողի առողջության քայլայումը, որինակ գլուխը կոտրվում, արյուն ե գալիս, վոտքը կամ ձեռքն ե կոտրվում, աչքն ե կուրանում, կամ ծեծի ժամանակ տուժողին յենթարկում են տանջանքի, կամ այնպես սաստիկ են ծեծում, վոր ծեծվողը հիվանդանում ե, անկողին ընկնում և այլն, այդ դեպքերում գործը յենթակա յե ժողղատարանի քննության:

Խոսքով վիրավորանք ասելով հասկացվում ե այն, վոր մեկը մի ուրիշին նրա ներկայությամբ կամ բացակայությամբ հայհոյում ե (մայր, հայր, ծնող և այլն) կամ վիրավորական խոսքեր ե ասում նրան, ինչպես՝ սրիկամբը, շանվորդի, զուրումսաղ, պոռնիկ և այլն: Խոսքով վիրավորանքը կարող ե լինել նաև գրավոր, յերբ հայհոյանքը կամ վիրավորական բառը գործ ե ածվում նամակի, տոմսի մեջ և այլն:

Գործողությամբ հասցվող վիրավորանքն այն ե, յերբ մեկը մի ուրիշին վիրավորում ե նրա մարմնին դիպչելով, բայց առանց մարմնական ցավ պատճառելու. որինակ՝ մոբուք և բոնում, կնոջ փեշերն ե բարձրացնում, զուրկամ կեղտոտություն ե թափում մեկի վրա,

ԴԱՄԱՐԻԾ ՊԱՄԻԳ ՅԱԾ Է ՊԵՏՈՒՄ, ԹՔՈՒՄ Է յԵՐԵ-  
ՍԻՆ և այլն:

Այս կարգի վիրավորանք են համարվում  
նաև այն անպատկառ արարքները, յերբ մեկը  
մյուսին իր մարմնի անպատշաճ մասերն ե  
ցույց տալիս է այլն:

Այս բոլոր գործերը յենթակա յեն դասա-  
կան սեկցիային:

Բ. ԳՅՈՒՂԵՈՐՀՐԴԻ ԴԱՏԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՅԻ  
ԿԱԶՄԸ, ԿՈՂՄԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՔ-  
ՆԵՐԸ.

Դատական սեկցիաները կազմվում են նա-  
խագահից և յերկու անդամից: Ինչպես նախա-  
գահին, նույնպես և անդամներին գյուղխոր-  
հուրդը ընտրում է իր կազմից գյուղխորհուրդի  
ընդհանուր ժողովում: Ընտրության ժամանակ  
պետք է այնպիսի թեկնածուների անուն տալ,  
վորոնք հայտնի յեն գյուղում իրենց ոգտավետ  
աշխատանքով և հեղինակություն են վայելում  
աշխատավոր գյուղացիների մեջ: Որենքը սահ-  
մանում է, վոր գյուղխորհուրդի նախագահը չի  
կորող դատ, սեկցիայի կազմի մեջ մտնել: Բացի  
մշտական կազմից սեկցիան ունի նաև յերկուսից  
մինչեւ հինգ փոխանդամներ: Այդ փոխանդամ-  
ներին գյուղխորհուրդը միաժամանակ ընտ-  
րում է սեկցիայի մշտական կազմի հետ միա-

սին ընդհանուր ժողովում : Փոխանդամները  
նույնպես պետք է լինեն գյուղխորհրդի կազմի  
արժանավոր անդամներից : Նրանք փոխարի-  
նում են դատական սեկցիայի այս կամ այն ան-  
դամին, յեթե վերջինը, որինակ, հիվանդա-  
նում, բացակայում է գյուղից կամ թե վորեվե  
հարգելի պատճառով հնարավորություն չու-  
նի մասնակցելու գործի քննությանը : Բացի  
սրանից գործը անաչառ կերպով քննելու նպա-  
տակով որենքը նույնպես թույլ չի տալիս սեկ-  
ցիայի անդամին մասնակցել գործի քննության  
այն դեպքերում, յերբ նա կողմ է հանդիսանում  
սեկցիայում քննվող քաղաքացիական կամ քրե-  
տական գործում, կամ կողմերից վորեւե մեկի  
ազգականն է : Այդ դեպքերում նրան փոխարի-  
նում է փոխանդամը : Նույնիսկ, յեթե սեկցիա-  
յի անդամը կամ նրա ազգականը շահագրգրո-  
ված են, վորպեսզի գործը վճռվի հոգուտ այս  
կամ այն կողմի, այս դեպքում ել սեկցիայի  
անդամը չի կարող մասնակցել գործի քննու-  
թյան և նրան փոխարինում է փոխանդամը :  
Այդ հանդամանքները գործը անաչառ կերպով  
քննելու տեսակետից այնքան կարեվոր են, վոր  
որենքը կտրուկ կերպով պահանջում է, վոր  
այդպիսի դեպքերում սեկցիայի անդամը ինքը  
հեռանա գործին մասնակցելուց . Հակառակ  
դեպքում որենքը թույլ է տալիս գործին մաս-  
նակցող շահագրգրոված կողմին համապատաս-

խան հայտաբարություն անել դատական սեհցի-  
ային վորպեսզի այս կամ այն անդամը հեռաց-  
վի: Կողմի այդ հայտարարությունը քննում են  
սեկցիայի՝ գործին մասնակցող մյուս անդամ-  
ները բացի այն անդամից, վորին վերաբերում  
ե այդ հայտարարությունը:

Յեթե սեկցիայի կազմից վորեվե անդամի  
հեռացնելու հարցը քննելիս սեկցիայի մեկ ան-  
դամը հակառակ ե այդ անդամին հեռացնելուն,  
իսկ մյուսը, ընդհակառակը, գտնում ե, վոր  
հարկավոր ե կողմի դիմումը հարգել, հարցը  
լուծվում ե հոգուտ հայտարարություն անողի,  
այսինքն՝ սեկցիայի անդամը հեռացվում ե, և  
նրան փոխարինում ե փոխանդամը:

#### Գ. ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն մի գործում լինում ե յերկու կողմ:  
Քաղաքացիական գործերում լինում են պւ-  
հանձատեր, այսինքն՝ այն անձը, վորը մի ու-  
րիշից պահանջ ե անում, և պատասխանող,  
առահենքն՝ այն անձը, վորից մի ուրիշը պա-  
հանջ ե անում: Քրեական գործերում լինում են՝  
տուժող, այսինքն՝ այն անձը, վորին ծեծել  
կամ վիրավորել են, և մեղադրյալ, այսինքն՝  
այն անձը, վորը մեղադրվում ե մեկին ծեծե-  
լու կամ վիրավորելու մեջ:

Դատական սեկցիայում քաղաքացիական  
գործերի դատաքննությունը սկսվում ե պա-

Հանջատիրոջ (Հայցվորի) գրավոր կամ բերանացի հայտարարության հիման վրա. նույնը տեղի յե ունենում քրեական գործերի վերաբերմամբ այն զանազանությամբ միայն, վոր գրավոր կամ բերանացի հայտարարությունը տալիս է տուժողը:

Յեթե բերանացի հայտարարություն է տրվում գյուղացու կողմից, դատական սեկցիայի նախագահը կամ անդամներից մեկը այդ մասին կազմում է արձանգրություն, վորի տակ ստորագրում է կամ նախագահը կամ անդամներից մեկը, նայած թե ով է կազմում արձանագրությունը, նույնպես և դիմողը: Հենց այդպիսի դիմումներն ել, ինչպես գրավոր նույնպես և բերանացի, կազմում են թե քաղաքացիական և թե քրեական գործերը: Սեկցիայի նախագահը, ստանալով այդ գործերը, նշանակում է վորոշ որեր, գործերը լսելու համար:


Յեթե պահանջատերը կամ տուժողը իրենց դիմումների մեջ ցույց են տվել վկաներ, վորոնք պիտի հաստատեն այս կամ այն հանգամանքը, կամ գիտակ անձանց, վորոնք պիտի պարզեն գործի համար նշանակություն ունեցող այս կամ այն հարցը, սեկցիայի նախագահը նրանց նույնպես հրավիրում է դատարան: Իսկ յեթե պահանջատերը կամ տուժողը իրենց դիմումների մեջ ցույց չեն տվել վկա-

ներ, նրանք կարող են գատի ուրը վերցնել ի-  
րենց հետ վկաներին և դալ դատարան:

Գործը լսելու մասին վոչ պակաս քան 3  
որ առաջ գյուղխորհրդի շենքում հայտարարու-  
թյուն ե կախվում; Վորի մեջ հիշվում են կող-  
մերի և վկաների անուն-ազգանունը այն դեպ-  
քերում, յերբ յերկու կողմերը և վկաներն ապ-  
րում են նույն գյուղում: Յեթե քաղաքացիական  
գործերում պահանջատերը ապրում է մի ուրիշ  
գյուղում, այդ դեպքում նրան ծանուցում ե  
ուղարկվում նույն գյուղը: Քրեական գործե-  
րում ծանուցում ե ուղարկվում թե տուժողին  
և թե մեղադրյալին, յեթե նրանք յերկուսն ել  
կամ նրանցից մեկն ապրում է մի ուրիշ գյու-  
ղում և վոչ այն գյուղում, վորտեղ քննվում է  
գործը:

Թե քաղաքացիական և թե Քրեական գոր-  
ծերում յեթե վկաներն ապրում են ուրիշ գյու-  
ղում, ապա նրանց ծանուցում ե ուղարկվում  
այն գյուղը, վորտեղ նրանք ապրում են:

Յեթե գործի դատաքննության ժամանակ  
պատասխանողը կամ մեղադրյալը առանց հար-  
գելի պատճառների չներկայանան, (հարգելի  
պատճառներ են՝ հիվանդությունը, գյուղից  
բացակայելը և այլն) այդ հանգամանքը չի  
դադարեցնում գործի դատաքննությունը: Աել-  
յան կարող է քննել գործը նրանց բացակայու-  
թյամբ, և յեթե դատաքննության ժամանակ



պարզութեամբ և հասանակած և ուստի անջատելով  
ուստի կամ կամ առաջի մեզող բաներ, անկ-  
ցիսն համապատասխան գործութեամբ և կայուց-  
նամ:

Յեթի միաները կամ զիստի անձինք ա-  
ռանց հարդելի պատճենների չեղքութեամբ,  
զատական անկցիսն կարող է նրանց առաջնական  
միջին չ ուր առաջանենքում հազար զա-  
դասակային զորժեամի բարձեցիք:

Յեթի բնութագործ և քրեական զործ և ներկա-  
չի լինում առաջազր, այլ զեօպութ ամբողջ  
զործը կարենամ եւ:

Ամեն մի զործ, մորը մանուշ և անկցիսն  
ովհանի ամենակարև միջոցութ քննիչի Յեթի  
առաջազր, մորը չափազանց եւ մոր զործը  
լովի, չի զարիս զատարան, այլ նշանակութ եւ,  
մոր ինքը առաջազր չի հեռացրելովում իր զոր-  
ծով, և զատարանը պարուածոր չի ամեն ան-  
զան զործը հեռացնել, մորովեազի չափազա-  
զան անձը ներկա լինի զատարելութ յանչ  
ի հարցել կարող են լինել զեօպութ, յերբ անկ-  
ցիսնեն հայունի չեն, կամ անկցիսնեն հայունու-  
թ, մոր առաջազր հարցելի պատճենութ ներկա-  
չի զատարելութ յանչ այլութ անկցիսն  
զործը կարող է հեռացնել յանչ մասնաւութ  
Արակեց անձը և ներսուի անձել և հեռացնել  
մենք առաջինը, մոր առաջազր չեղքութեամբ  
զեօպութ զործը կարենամ եւ, առկայի մեջա-

ուրժութեան վարչութեան գոտուածութեան  
թյունը, կարող է պահանջել, մարդուածի պարք  
և նոր նշանակութեան ուրժութեան վարչութեան  
առջեցին: Մեզուարութեան արդիութեան հայուածութեան  
թյունը սեկուլարի համար պարագագիւթեան:

Ենթադրութեան վարչութեան ուրժութեան  
կամաց և առաջամասաւոր Անդի մեջից, մարդուածի  
պարքութեան ուրժութեան մեջ և պահանջեած է  
կամացի առջեցին: Համարութեան և նրանունք, մարդու  
պարքի նրան հայուածությունը արժի ապահովա-  
ցելու զատարանի առաջ, վարչութեան առջեցին  
նրա վերաբերութեան անձինչի է: Անդի առաջամաս  
բացակայություն զերուում սեկուլարի պարք  
կարենման և և աշխարհու առաջ մեզուարութեան  
առջեցին թյունը այն ժամին, թե նու կա-  
պացուցի, վարչութեան զատարանի և նրան մե-  
զութեան, որինակ, օհեք կամ ձայնութեան  
մեջ, առա սեկուլարի զատարանի սիստ և զարթում:  
Այդպիսի զերուում զատ սեկուլարի պետք և  
զարթը քննի:

Անդի զատարանություն ներկա լինեն և  
առաջար և մեզուարութեան վարչութեան առաջամաս  
և ազգարեան զարթը լինու ժամին, զարթը ան-  
պայման սեկուլարի կազմից կարենման է:

Գառաքիւնությունը, ինչպիս բազարացիւն-  
եան, նու նու և քրիստոն զարթեան վերաբեր-  
ամբ, կառարիւնմ և զարթուց և բերանացի:

Ամեն մի գյուղացի կարող է ներկա լինել սեկտուայի նիստերին և լսել գործը:

ա. Քաղաքացիական գործեր

Յեթե լսվում է քաղաքացիական գործ, կողմերը, այսինքն՝ պահանջատերն ու պատասխանողը պետք է ապացուցեն այն հանգամանքները, վորոնց վրա նրանք հիմնվում են, մասնավորապես պահանջատերը պիտի ապացուցի իր պահանջի հիմքը ու չափը:

Որինակ, յեթե պահանջատերը պահանջում է բռնագանձել պատասխանողից 3 ոռւրիշ — գառի համար այն հիմունքով, վոր պատասխանողը քարով խփել է գառին և վոտքը կոտրել ե, և նա ստիպված է յեղել մորթել դառը, իսկ վերցրած միսն ու մորթին արժե ընդամենը 6 ոռւրիշ, ապա նա պիտի ապացուցի, վոր իրոք այդ դեպքը տեղի յե ունեցել, և զառ արժի 9 ոռւրիշ, իսկ մորթին ու միսը արժեն վոչ ավելի, քան 6 ոռւրիշ: Իսկ նա այդ կարող է հաստատել վկաների ցուցմունքներով, վորոնց հարցաքննության մասին նա միջնորդություն է հարուցում սեկցիայի տակ: Յեթե սեկցիան գտնում է, վոր վկայի կամ վկաների հարցաքննությունը եյական է գործի համար, թույլ է տիս այդ:

Յեթե պատասխանողը ունի առարկություն դատապահանջի դեմ, նույնպես պիտի հաստ-

տի այն հանգամանքները, վորոնց վրա նա  
հիմնվում է: Որինակ, յեթե ներկա դեպքում  
պատասխանողը հայտնում է, վոր նա այդ որը  
գյուղում չի յեղել, կամ գառը արժե 5 ռուբ-  
լի և վոչ թե 9 ռուբլի, ապա նա պիտի վկաների  
ցուցմունքով հաստատի այդ դատի ժամանակ:

Այդ բոլորի մասին սեկցիայի անդամնե-  
րից մեկը կամ գյուղիորհրդի քարտուղարը  
հենց դատաքննության ժամանակ կազմում է  
համառոտ արձանագրություն, վորի մեջ ան-  
պայման պիտի մատնանշված լինի հետևյալը.

1) Դատական սեկցիայի նիստի որը,  
2) սեկցիայի կազմը և պահանջատիրոջ ու պա-  
տասխանողի անուն ու ազգանունները, 3) պա-  
հանջատիրոջ կարճ կերպով ձևակեպրված պա-  
հանջը և պատասխանողի բացատրությունը,  
4) վկաների ցուցմունքների համառոտ բովան-  
դակությունը:

Սրանից հետո դատական սեկցիան, յեթե  
գտնում է, վոր գործի բոլոր հանգամանքները  
պարզ են, հեռանում է խորհրդակցության սեն-  
յակը վորոշում կայացնելու համար:

Վորոշումը գրվում է այն արձանագրու-  
թյան մեջ առանց այն պատճառաբանելու, թե  
ինչ հիմունքներով է կայացվում: Խորհրդակ-  
ինչ հիմունքներով է կայացվում: Խորհրդակ-  
ինչ հիմունքներով է կայացվում: Խորհրդակ-  
ինչ հիմունքներով է կայացվում: Խորհրդակ-

յացվում է ձայների մեծամասնությամբ և հայտարարվում է կողմերին:

Թէ քաղաքացիական գործերի վերաբերմամբ ինչպիսի արձանագրություններ պետք է կազմել, այս դրքույիշին կցվում է համապատասխան ձեվր (Հավելված № 1) .

Մենք վերցրինք քաղաքացիական գործերի մի տեսակը: Սակայն պահանջներ կարող են լինել զանազան՝ որինակ, մեկը մյուսից պահանջում է պարտք տված դրամը, փոխութված հացահատիկը, հատուցում այս կամ այն վնաս պատճառելու համար և այլն:

Այդ բոլոր գործերը քննվում են սեկցիայի կողմից ցույց տված վերոհիշյալ կարգով: Այստեղ հարկավոր է միայն մատնանշել հետեւյալը.

Պահանջատերը ու պատասխանողը իրենց պահանջը ու առարկությունը հաստատելու համար բացի վկաների ցուցմունքից—կարող են ներկայացնել գրավոր փաստաթղթեր, խնդրել, հարցաքննել գիտակ մարդկանց այս կամ այն հարցը պարզելու համար, կատարել տեղական զննություն և այլն: Դատական սեկցիան, յեթե գտնում է, վոր այդ անհրաժեշտ ե գործի համար, բավարարում է կողմերի միջնորդությունը:

Ինքը դատական սեկցիան նույնպես իր նախաձեռնությամբ գործի հանգամանքները

լիովին պարզելու համար կարող է պահանջել փաստաթղթեր, կատարել վորոշություղական գործողություններ (վկաների հարցաքննություն, տեղական զննություն և այլն). Պահանջակ դատական սեկցիան գործը մանրամասն քննելու համար կարող է գործ դնել այն բոլոր միջոցները, վոր ինքն անհրաժեշտ կը գտնի:

Վկաներ հարցաքննելու ժամանակ դատական սեկցիան քաղաքացիական գործերի վերաբերմամբ նախ և առաջ պիտի պարզի թե արդյոք ի՞նչ փոխհարաբերությունների մեջ են գտնվում վկաները կողմերի հետ։ Յեթե որինակ, պատասխանողը, հայտնում է, վոր պահանջատիրոջ այս կամ այն վկան նրա բարեկարն է և չի կարող արդարացի ցուցմունք տալը, և խնդրում է նրան չհարցաքննել, սեկցիան կարող է թույլ չտալ այդ վկայի հարցաքննությունը։

Վկաների հարցաքննությունից առաջ դատական սեկցիան վկաներին նախազգուշացնում է, վոր նրանք պատասխանատու յեն ժողովադարանի առաջ սուտ վկայություն տալու համար։

Դատական սեկցիայի վորոշումները ամփիջականորեն ի կատար են ածում գյուղինորհուրդները գյուղկատարածուների միջոցով։

Բ. Քրեական գործերը

Յեթե քննվում է Քրեական գործ, կողմե-  
րը, այսինքն տուժողը և մեղադրյալը պիտի  
ապացուցեն այն բոլոր հանգամանքները, վո-  
րոնց վրա նրանք հիմնվում են։ Մասնավորա-  
պես տուժողը պիտի ապացուցի, վոր իրոք  
դեռքը՝ ծեծը կամ վիրավորանքը առեղի և ու-  
նեցել, և իրոք մեղադրյալը նպաստել է ունե-  
ցել օրատնտեղ տուժողին ֆիզիքական ցավ  
(ծեծ) կամ անօրատնտեղ նրան խռոքով, պատմու-  
կամ գործողությամբ (վիրավորանք)։

Յեթե մեղադրյալը առարկեալ է տուժողի  
հայտաբարության ու բացատրության զեմ,  
առաջ նույնական պիտի ապացուցի իր ա-  
ռարկությունը այս կամ այն վաստերով։

Խնչողեա տուժողի, նույնական և մեղադրյա-  
լի համար, ապացուց են ծառայում վիճակների  
ցուցմունքները, ամեն առանձ վաստաթղթեր,  
գիտակ ժարդեկանց կարծիքը այս կամ այն հար-  
ցի ժամանեց, վոր կազ անի գործի հետ, և իրե-  
ղեն ապացույցները։

Իրեղեն ապացույցն այն է, յերբ մեղադր-  
յալի այս կամ այն գործողության հետեւման-  
քով թողեվում է զարաշ հետք, առարկա և այն-  
յեթե, որինակ, համակի մեջ մեղադրյալը հայ-  
նուի և տուժողին հետց նամակուր իրեղեն ապա-  
ցույց կլինի, յեթե մեկին ծեծել են ժարդեկան։

ժարակը իրեղեն ապացույց է, և այլն։ Այսուղ  
պիտի հիշել վոր յեթե մեղադրյալը ժխոռմ  
է, վոր նամակը նո չի ստորագրել, դատական  
սեկցիան կարող է Հրավիրել դիտուկ անձ-  
պարզելու այն հանգամանքը, թե արդյոք նո-  
մակի տակ յեղած ստորագրությունը մեղադր-  
յալի ստորագրությունն է թե վոչ։ Այս հանգա-  
մանքը կարեվոր նշանակություն կարող է ո-  
նենալ զործի համար։

Գիտակ անձ կարող է լինել ամեն մի քո-  
րաքացի, վոր այս կամ այն հարցին լով ծա-  
նոթ է և կարող է հայտնել իր հիմնավորված  
կարծիքը։ Ենթադրությունը պարզելու համար, դատական  
սեկցիան կարող է Հրավիրել, վորուն դիտու-  
կան անձ, անդական ուսուցիչներից մեկին։

Մենք այսուղ կանգ չենք առնի այն բոլոր  
հարցերի վրա, վորոնք կազ ունեն դատաքննու-  
թյան հետ։ Դատական սեկցիայում քաղաքա-  
ցիական զործեր քննելու կարգի մասին խոսե-  
լիս, մենք բացատրել ենք ամեն մի ապացույցի  
նշանակությունը, կողմերի իրավունքների,  
դատական սեկցիայի նախաձեռնության, նիս-  
տի արձանագրություն կողմերու և վորուն  
կարագնելու վերաբերյալ հարցերը։

Նույնի վերաբերյալ է և քրեական զործե-  
րին։

Այստեղ հարկավոր է միայն մի հանգամանքի վրա ուշադրություն դարձնել:

Ինչպես մենք այս գրքույկում բացատրել ենք, յեթե քաղաքացիական գործերում այս կամ այն վկան կողմերից մեկի բարեկամն է, ապա մյուս կողմի միջնորդության համաձայն դատական սեկցիան կարող է չհարցաքննել այդ վկային:

Քրեական գործերում այդ հանգամանքը նշանակություն չունի և վկաների հարցաքննությունը թույլ է տրվում դատական սեկցիաի կողմից անկախ վկաների և կողմերի փոխհարաբերություններից:

Գործի բոլոր հանգամանքները պարզելուց և դատաքննությունը վերջացնելուց հետո դատական սեկցիան կայացնում է վորոշում նույն կարգով, ինչ կարգով այդ կատարում է քաղաքացիական գործերի նկատմամբ: Թե քրեական գործերի վերաբերմամբ ինչպիսի արձանագրություններ պետք են կազմել, այս գրքույկին կցվում է համապատասխան ձեվ (Հավելված № 2):

Սոցիալական միջոցները քրեական գործերի վերաբերմամբ համարվում են՝ խոսքով, գրավոր, կամ գործողությամբ վիրավորանք հասցնելու դեպքում՝ հարկադիր աշխատանք մինչեւ մի շաբաթ ժամանակով կամ տուգանք մինչեւ 15 ուրբի:

**Ծեծելու գեպքում՝ հարկադիր աշխատանք**  
**մինչեվ յերկու շաբաթ ժամանակով կամ տո-**  
**գանք մինչեվ 25 ռուբլի:**

**Այդ միջոցները ուղղիչ-դաստիարակչա-**  
**կան միջոցներ են, և դատական սեկցիաները,**  
**անմիջապես շփվելով մասսաների հետ, կարող**  
**պիտի լինեն իրենց դատական-ուղղիչ միջոց-**  
**ներով ազդել գյուղացիության վրա. հենց սը-**  
**րանով պիտի արտահայտվի գյուղսեկցիաների**  
**գործունեյության դրական կողմը քրեական**  
**գործեր քննելիս; Կայացած վորոշումները ան-**  
**միջականորեն ի կատար են ածում գյուղխոր-**  
**հուրդների միջոցով:**

Գանձված տուգանքները հատկացվում են  
գավառակային բյուջեյի ոգտին:

Թե քրեական և թե քաղաքացիական գոր-  
ծերում յեթե կողմերը ուղում են հաշտվել,  
պետք ենկատի ունենալ հետեւյալը.

Յեթե մի ունեվոր գյուղացի ծեծել կամ  
վիրավորել ե բատրակին, և բատրակը նրա  
գեմ գանգատ ե տվել, կամ մի աղքատ գյու-  
ղացի մի հարուստ գյուղացուց իր ծախած խա-  
ղողի կամ յուղի փողն ե պահանջում և դիմել  
ե դատական սեկցիային, սակայն գործի քըն-  
ության ժամանակ կամ բատրակը կամ աղքատ  
գյուղացին հայտնում են, վոր իրենք հաշտվել  
են հակառակ կողմի հետ և խնդրում են գործը  
կարճել, ապա դատական սեկցիան կարող է

գործը կարճել միայն այն դեպքում, յեթե այդ  
հաշտությունից չի վնասվելու տնտեսապես  
թույլ կողմը (բատրակը կամ աղքատ դյու-  
ղացին) :

Դատական սեկցիան պետք է այդ հանգամանքը  
նկատի ունենա, վորովհետեւ կարող են տեղի  
ունենալ այսպիսի դեպքեր. որինակ. հարուստ  
գյուղացին կարող է բատրակին փող խոստա-  
նալ, և բատրակը կարիքից ստիպված, հաշտ-  
վի նրա հետ, և նրան ծեծող կամ վիրավորող  
մարդը մնա անպատիժ. կամ հարուստ գյու-  
ղացին կարող է աղքատ պահանջատիրոջը խոս-  
տանալ փող պարտք տալ կամ սերմացու ցորեն  
փոխ տալ, յեթե նա հրաժարվի իր պահանջից,  
և աղքատը փողի կամ սերմացուի մեծ կարիք  
ունենալով՝ հրաժարվի այն արդարացի պա-  
հանջից, վոր արել է հարուստից փողի մասին:

#### Գ. ԴԱՏԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ԳԱՆԳԱԾ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ.

Դատական սեկցիայի՝ թե քաղաքացիական  
և թե քրեական գործերի վերաբերյալ վորո-  
շումերի դեմ կողմերը կարող են գանգատ տալ  
համապատասխան դավառակային գործադիր  
կոմիտեյի նախագահության՝ դատական սեկ-  
ցիայի վորոշման որից սկսած 7 որվա ընթաց-  
քում :

Որինակ, քազաքացիական գործերի նկատմամբ պատասխանողը գտնում է, վոր դատական սեկցիայի այն վորոշումը, վորի համաձայն նրանից հինգ փութ ցորեն պետք է դանձվի, անարդարացի յե այն պատճառով, վոր պահանջատերը Յ փութ ցորեն արդեն ստացել է նրանից մինչև դատը։ Այդ հանգամանքը պատասխանողի կարծիքով կհաստատելին նրա վկաները, յեթե դատական սեկցիան հարցաքըններ նրանց։ Այդ մասին նա խնդրել է դատական սեկցիայից և արձանագրության մեջ հիշատակված է այդ։ Այդպիսի դեպքերում նա կարող է դանդատ տալ գավառակային գործկոմի նախագահության, և բացատրելով այդ, խնդրել փոխել դատական սեկցիայի վորոշումը։ Գանգատը անմիջապես տալիս է դատական սեկցիային և տալու ժամանակ նա կարող է խնդրել դատական սեկցիայից մինչև գավառակային գործկոմի նախագահության կողմից գործը նայելը դադարեցնել սեկցիայի վորոշման կատարումը նրա վերաբերմամբ։ Դատական սեկցիայից է կախված, թե արդյո՞ք հարկավոր երիայից է կախված, թե արդյո՞ք հարկավոր բավարարել դանդատավորի այդ միջնորդությունը վճիռը հետաձգելու մասին՝ թե վոչ։

Գանդատ կարելի յե տալ նաև ուրիշ դեպքերում։ որինակ, քրեական գործով մեղադըրքերում, որինակ, քրեական գործով մեղադըրքերում է վոհ առն գլուզում չի հանձնվել<sup>\*</sup>), բայց վող անձին ծանուցում չի հանձնվել<sup>\*</sup>)

\*.) Այն դեպքում, յերբ նա մի ուրիշ գլուզում է առնելում և վոհ առն գլուզում, վորակդ դորժը քննվում է,

Դատական սեկցիան առանց նրա բացատրությունը լսելու, նրա բացակայությամբ քննում է գործը և վորոշում է նրան պարտադիր տշխատանքի յենթարկել կամ տուգանել. կամ՝ դատական սեկցիայի անդամներից մեկը քաղաքացիական գործում պատասխանողի բարեկամն է յեղել, պահանջատերը խնդրել է նրան հեռացնել դատարանի կողմից, բայց սեկցիան չի հարգել նրա խնդիրը և գործը քննել է այդ անդամի մասնակցությամբ. ի հարկե այդպիսի դեպքերում գանգատավորը պետք է անպայման իր ձեռքի տակ ունենա անվիճելի փաստեր այն մասին, վոր սեկցիայի հիշյալ անդամը պատասխանողի բարեկամն է յեղել: Այսպիսի դեպքերում առանց հիմնավոր փաստերի գանգատ տալը յերբեք թույլ չի տրվում:

Դատական սեկցիան, ստանալով գանգատը, անմիջապես ուղարկում է ամբողջ գործը գավառակային գործկոմի նախագահության: Գործի մեջ անպայման պիտի լինեն այն բոլոր թղթերը, վորոնք վերաբերում են տվյալ գործին՝ պահանջատիրոջ գրավոր պահանջը, տուժողի հայտարարությունը, ծանուցումները, նիստի արձանագրությունները և այլ գրություններ: Դատական սեկցիան կարող է կցել գործին իր բացատրությունը այն մասին, թե արդյոք ի՞նչ հիման վրա յեկայացվել տվյալ վորոշումը;

Մենք զույց տվինք միայն մի քանի որինակ, յերբ կողմերը կարող են գանգատ տալ դատական սեկցիայի վորոշման դեմ:


Առհասարակ պետք է ասել, վոր գանգատ տալու պատճառ կարող է համարվել, յերբ դատական սեկցիան կայացնում է աշկարա անարդարացի վորոշում կամ խախտում է Արդժողովմատի 1927 թ. հոկտեմբերի 1-ի «Դատական սեկցիաների մասին» հրատարակված հրահանգի կանոնները: Իսկ այդ կանոնների պարզաբանությունը մենք մանրամասնորեն տվեցինք այս գրքույկում:

Գավառակային գործկոմի նախագահությունը, գործը քննելիս, յերբ նկատում է, վոր դատական սեկցիան կայացրել է այնպիսի վորոշում, վոր միանգամայն չի համապատասխանում գործի տվյալներին կամ նա աշկարա խախտել է վերոհիշյալ հրահանգի կանոնները, վերացնում է դատական սեկցիայի վորոշումը և առաջարկում է նրա գործը նորից քննել նոր կազմով:

Գործը յերկրորդ անգամ քննելիս դատական սեկցիայի կազմի մեջ մտնում են փոխանդան սեկցիայի կազմի մեջ մտնում են փոխանդան սեկցիայի կազմությանը մաս նակարագրել նույն գործի յերկրորդ քննության մասնակցել նույն գործի յերկրորդ քննությանը այս կամ նը: Յեթե գործի առաջին քննությանը այս կամ այն պատճառով (հիվանդություն, գյուղից

բացակայել և այլն) դատական սեկցիոնի անդամներից մեկը չի մասնակցել, ապա յերկրորդ անգամ նույն գործը քննելիս նա մասնակցում է փոխանդամների հետ միասին, բացի այն գեղքերից, յերբ գործի առաջին քննության ժամանակ նա սեկցիայի կազմից հեռացվել է կողմերից վորեե մեկի հայտարարության հիման վրա (մերժում): Գործը յերկրորդ անգամ քննվում է ճիշտ այն կարգով, ինչ կարգով քննվում է առաջին անգամ:

Յերբ գավառակային գործկոմի նախագահությունը հաստատում է դատական սեկցիայի վորոշումը, նախագահության այդ վորոշումները վերջնական են, և նրանց դեմ գանգատառակայի վորոշումը, վորը հաստատվում է գավառակային գործկոմի նախագահության կողմից, մտնում է իր ուժի մեջ:



# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

۷۲۰

quædam etiam

ՎՐԱՆՊԱԿԱՆ ԽՈՐՀԵՊԻՒՆ ՄԱՐԴԻԹԻՐ ԿԹԱԿԱԿԱՆ ԱՆԿՐՈՒԹԻՒՄ 192 թ.

**4** . . . . . **5-11** **Silphium;**

## ՍԵԿՈԳԻՆԱՐԻ ԿԱՎԱՄԾ

## **‘Եալուագահ’ (Անուն-ազգանուն)**

## Անդամներ՝ (Անուն-ազգանուն)

## Քարտուղար՝ (Անուն-ազգանուն)

Խովում և գործը ըստ հայելի Միքայել Վարդանյանի ընդդեմ Սահակ Հայրապետյանի իր վնասված գառի դինը ստանալու համար

1. Հայոց քաղ. Ա. Վարդանյանը բողոքեց, վոր ամսի 10-ին իր զառը Ա. Հայրապետյանի այլու մոտից անց ելիս Ա. Հայրապետյանը քարով խփել ե ու վոտքը կոտրել, վորի պատճառով ինքը մորթել ե զառը. զառն արժե 9 ոռորդի, ուստի իրնդրում ե բոնագանձել այդ զումարը Ա. Հայրապետյանից:

## Ստորագրություն

2. Պատասխանող Ա. Հայրապետյանը չի ժխտում, վոր հասցրել է Ա. Վարդանյանին  
վնաս, սակայն հայտնում է, վոր միսն լնքը չի ոզագործել և ինգրում ե մոի ու  
մորթու արժեքը դուրս գալ դառի գնից

## Մարտադրություն

3. Վկա Միսիթար Գրսպարյանը ցույց տվեց, վոր Ա. Հայրապետյանը քարով խփեց և կռարեց Մ. Վարդանյանի գառի վոտքը, վորից նա ստիպված յեղավ մորթել իր գառը և վաճառել, միսը և մորթին ծախվեց վեց ոռոբլով, իսկ դառը արժեր 9 ո.:


## Սառագրություն

Digitized by

Բոնադանձել Ա. Հայրապետյանից իր հասցրած վնասի համար հոգուտ Ա. Վարդանյանի 3 սուբլի, դուրս զալով գառի գնից մոխ և մոքթու արժեքը 6 սուբլի:

ՍԵԿՐԵԴԻ 6 ԽԱՆԳԱԽ (Մարտագրություն)

## **Ա. Եղամիկը՝ (Ստորագրություն)**



ՀԱՅՈՒԹԻՒՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2  
ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038309

[064]

A 4064

✓3